


ՄՈԴՈՒԼ 2



ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ



Ուսումնական նյութ լրագրողների,
ՀԿ ներկայացուցիչների և իրավաբանների համար

«Ընտրական բարեվարքության և տեղեկատվական
դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագիր

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Ընտրական բարեփարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից «Նոր Ժողովրդավարություն» հիմնադրամի (NDF) ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի «Նոր Ժողովրդավարություն» հիմնադրամի տեսակետը:

Փաստաթուղթը պատրաստել է «Ընտրական բարեփարքության և տեղեկատվական դիմակայունության ամրապնդում Հայաստանի մարզերում» ծրագրի ազգային փորձագետ Մարիամ Զադոյանը:

Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընտրությունների մասնակից սուբյեկտների բարեփոխության կանոնները
 - 1.1. Ընտրական հանձնաժողովի անդամի բարեփոխության կանոնները
 - 1.2. Կուսակցության և նրա անդամի բարեփոխության կանոնները
 - 1.3. Հայտարարագրումը
 - 1.4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) դերը
2. Նախընտրական քարոզչության կանոնակարգումը
 - 2.1. Քարոզչության ժամանակահատվածը
 - 2.2. Քարոզչության արգելված ձևերը
 - 2.3. Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը
 - 2.4. Քվեարկության օրը արգելված գործողություններ
3. Ընտրությունների ֆինանսավորման թափանցիկությունը
 - 3.1. Կուսակցության գույքի և ֆինանսավորման սկզբունքները
 - 3.2. Ընտրական գրավը
 - 3.3. Նախընտրական հիմնադրամները
 - 3.4. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը
4. Լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները
 - 4.1. Հավատարմագրումը
 - 4.2. Քվեարկության սենյակում ներկայության կանոնները
 - 4.3. Քարոզչության եթերաժամի հավասարություն
 - 4.4. Քաղաքական գովազդը
 - 4.5. Սոցիոլոգիական հարցումները
5. Դիտորդական առաքելությունը
 - 5.1. Դիտորդություն իրականացնելու իրավունքը
 - 5.2. Դիտորդների հավատարմագրումը
 - 5.3. Դիտորդի վարքագծի կանոնները
 - 5.4. Դիտորդների իրավունքները
 - 5.5. Դիտորդի պաշտպանվածությունը
6. Վստահված անձինք
 - 6.1. Վստահված անձի իրավունքները
7. Ընտրությունների արդյունքների ամփոփումը

- 7.1. Արգելապատնեշները
- 7.2. Մանդատների համամասնական բաշխումը
- 7.3. Ազգային փոքրամասնությունների 4 մանդատը
- 7.4. Մեծամասնության ամրապնդման մեխանիզմը
- 7.5. ԿԸՀ-ի հնարավոր որոշումները
- 7.6. Կռալիցիայի կազմումը
- 7.7. Երկրորդ փուլը
- 7.8. Վերաքվեարկություն և ընտրությունների անվավեր ճանաչումը
- 8. Ընտրական բողոքարկման մասնագիտական ընթացակարգերը
 - 8.1. Թեկնածուի կամ ընտրական ցուցակի գրանցումն անվավեր ճանաչելու դիմումը
 - 8.2. Տեղամասում քվեարկության արդյունքն անվավեր ճանաչելու դիմումը
 - 8.3. Ընտրությունների ընդհանուր արդյունքն անվավեր ճանաչելու դիմումը
 - 8.4. Այլ անձի փոխարեն քվեարկելու դիմումը
 - 8.5. Քվեարկության արդյունքների վերահաշվարկը
 - 8.6. Սահմանադրական դատարանի վարույթը
- 9. Հանրային վերահսկողության գործիքները
 - 9.1. Քվեարկության տեսանկարահանումը
 - 9.2. Հանրային իրազեկում
 - 9.3. Կուսակցությունների ընտրական ցուցակների գենդերային քվոտաները
 - 9.4. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցչություն
- 10. ՏԻՄ ընտրությունների և հանրաքվեի առանձնահատկությունները
 - 10.1. ՏԻՄ ընտրությունների բարեփոխության շեշտադրումներ
 - 10.2. Հանրաքվեների հատուկ կանոնակարգեր

Հավելված 1. Ընտրական բարեփոխության շեղումների տիպական օրինակները

Հապավումների ցանկ

Հապավում	Բացատրություն
ԱԺ	Ազգային ժողով
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸՏԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԴ	Սահմանադրական դատարան
ՍԷԿՏ	Սահմանային ելեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն մոդուլը ընտրական բարեվարչության պաշտպանության գործիքակազմի ուղեցույց է: Ի տարբերություն Մոդուլ 1-ի, որը կենտրոնացած է ընտրողի անհատական իրավունքների վրա, Մոդուլ 2-ը ընդգրկում է ընտրությունների ողջ ցիկլի բարեվարչության պաշտպանության մեխանիզմները՝ մինչև ընտրական փուլից (թեկնածուների գրանցում, քարոզչություն, ֆինանսավորում) մինչև հետընտրական (արդյունքների վիճարկում, Սահմանադրական դատարանի վարույթ):

Մոդուլը կազմված է հինգ մասից, որոնք հետևում են ընտրությունների ցիկլի ժամանակային հաջորդականությանը.

- Մաս Ա՝ Բարեվարչության հիմքերը (բոլոր սուբյեկտների համար)
 - Մաս Բ՝ Մինչընտրական և քարոզարշավի փուլը
 - Մաս Գ՝ Քվեարկության օրը և արդյունքների ամփոփումը
 - Մաս Դ՝ Հետընտրական փուլը՝ բողոքարկում
 - Մաս Ե՝ Հատուկ թեմաներ և ուղեցույցներ
-

ՄԱՍ Ա. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ընտրությունների մասնակից սուբյեկտների բարեվարքության կանոնները

Ընտրական բարեվարքության կարևոր բաղադրիչներից է ընտրությունների գործընթացում մասնակից սուբյեկտների՝ ընտրական հանձնաժողովների անդամների, թեկնածուների, կուսակցության լիազոր ներկայացուցիչների բարեվարք գործունեության ապահովումը: Բարեվարքության կանոնակարգումը գործում է երկու ուղղությամբ՝ կանխարգելիչ (հայտարարագրում, անհամատեղելիության պահանջներ) և պատասխանատվության (խախտումների դեպքում մեխանիզմների կիրառում):



Ընտրական հանձնաժողովի անդամի բարեվարքության կանոնները

ՀՀ Ընտրական օրենսգիրքը հանձնաժողովի անդամներին վերաբերող բարեվարքության կանոնները սահմանում է մի քանի հոդվածներով՝ հոդված 41-ով (հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները), հոդված 42-ով (ԿԸՀ-ի կարգավիճակը), հոդված 43-ով (ԸՏՀ-ի կարգավիճակը) և հոդված 45-ով (լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը): Հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել հետևյալ սկզբունքները.

Անհամատեղելիության կանոնները

Հանձնաժողովի անդամ չեն կարող լինել ՀՀ քրեական օրենսգրքի 210-224.1 հոդվածներով նախատեսված հանցանքների համար դատապարտված անձինք՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված լինելու հանգամանքից, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցողները: Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել նաև ԱԺ պատգամավորները, նախարարները, համայնքների ղեկավարները, ավագանու անդամները, մարզպետները, դատավորները, դատախազները, ոստիկանության, ազգային անվտանգության, քրեակատարողական ծառայության աշխատակիցները, զինծառայողները, վստահված անձինք, լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները (Ընտրական օրենսգիրք, հոդված 41, մաս 2):

Քաղաքական չեզոքության պարտականությունը

ԿԸՀ-ի անդամի լիազորությունները դադարեցվում են, եթե նա խախտում է անհամատեղելիության պահանջները, անդամագրվում է որևէ կուսակցության, որևէ այլ կերպ քաղաքական գործունեությամբ զբաղվում է, կամ հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չի ցուցաբերում: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել հրապարակային քաղաքական

գործունեություն չծավալող քաղաքացին (Ընտրական օրենսգիրք, հոդված 42, մաս 8 և հոդված 43, մաս 3):

Քրեական պատասխանատվությունը. Ընտրական հանձնաժողովի անդամի կողմից բարեվարքության կանոնների խախտումը կարող է հանգեցնել ինչպես կարգապահական պատասխանատվության (հանձնաժողովի կազմից հանում), այնպես էլ քրեական պատասխանատվության: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 212 (Ընտրությունների արդյունքների կեղծիք) և հոդված 223 (Հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) կիրառվում են հանձնաժողովի անդամների ընթացակարգային խախտումների դեպքում, որոնք հանգեցրել են արդյունքների աղավաղման:



Կուսակցության և նրա անդամի բարեվարքության կանոնները

Անհամատեղելիության կանոնները

Կուսակցության հիմնադիր կամ անդամ չեն կարող լինել.

- Դատավորները, դատախազները, քննիչները (Սահմանադրությամբ).
- Հանրապետության նախագահը (լիազորությունների շրջանում).
- Մարդու իրավունքների պաշտպանը.
- ԿԸՀ-ի անդամները.
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները.
- Հաշվեքննիչ պալատի անդամները.
- Կենտրոնական բանկի խորհրդի անդամները («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 13):

Կուսակցության գործունեության կասեցումը կամ արգելումը բարեվարքության խախտումների համար («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 31-33)

Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ, եթե կուսակցությունը.

- Թույլ է տվել «օրենքի կոպիտ խախտում», մասնավորապես՝ չթույլատրված կամ սահմանաչափը գերազանցող նվիրատվությունները չվերադարձնելը կամ տարեկան հաշվետվությունը չհրապարակելը կամ չներկայացնելը, և վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո 30 օրվա ընթացքում խախտումը չվերացնելը.

- Հիմնադրման կամ պետական գրանցման ժամանակ թույլ է տվել այնպիսի խախտում, որը հայտնի լինելու դեպքում կուսակցությունը չէր գրանցվի:

Գործունեության արգելումը կիրառվում է, եթե կուսակցությունը քարոզում է սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն է կիրառում (հոդված 33): Արգելման դեպքում կուսակցությունը լուծարվում է, բայց պատգամավորների մանդատները չեն դադարեցվում (հոդված 32, մաս 10 և հոդված 33, մաս 2):



Հայտարարագրումը

Ընտրությանը մասնակցող կուսակցության և թեկնածուի հայտարարագրումը (Ընտրական օրենսգիրք, հոդված 8, մաս 5)

Թափանցիկության ապահովման կարևոր մեխանիզմներից է թեկնածուների և ընտրություններին մասնակցող կուսակցությունների գույքի և եկամուտների պարտադիր հայտարարագրումը: Այս կանոնը գործում է որպես կանխարգելիչ միջոց՝ ընտրողին հնարավորություն տալու համար տեսնել թեկնածուների ու կուսակցությունների ֆինանսական պատկերը մինչև քվեարկության օրը:



Կուսակցության ղեկավար մարմնի անդամների հայտարարագրումը («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 28.1)

Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները պարտավոր են ԿԿՀ-ին ներկայացնել գույքի և եկամուտների հայտարարագիր (պաշտոնի ստանձնման, դադարեցման և տարեկան): Բացառությամբ՝ ընտանիքի անդամների տվյալների ներկայացման, որը նրանց համար չի կիրառվում:

Ընտրված պաշտոնատար անձի հայտարարագրումը («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք)

Նշյալ հայտարարագիրը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (ԿԿՀ): Վերջինը կիրառվում է հետո, երբ ընտրված անձը ստանձնում է իր պաշտոնը, ոչ թե

թեկնածուի գրանցման ընթացքում: Ընտրվելուց հետո պատգամավորը, համայնքի ղեկավարը, ավագանու անդամը պարտավոր են ներկայացնել ԿԿՀ-ին գույքի, եկամուտների, շահերի բախման և ծախսերի, ինչպես նաև իրենց ընտանիքի անդամների (ամուսնու, անչափահաս երեխաների) վերաբերյալ հայտարարագրեր՝ ինչը ընտրովի պաշտոնի զբաղեցման հետ կապված շարունակական պարտականություն է:

Կուսակցության տարեկան հաշվետվությունը («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 1, հոդված 27)

Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 20-ը ԿԿՀ-ին ներկայացնել ֆինանսական միջոցների աղբյուրների, ծախսերի և գույքի մասին տարեկան հաշվետվությունը: Հաշվետվությունը հրապարակվում է ԿԿՀ-ի կայքում (www.cpcarmenia.am):

Կուսակցության տարեկան հաշվետվությունները պարտադիր աուդիտի են ենթարկվում, եթե.

- ❖ Կուսակցության մուտքերը կամ ելքերը գերազանցել են նվազագույն աշխատավարձի 25,000-ապատիկը, կամ
- ❖ Կուսակցությունը ստացել է պետական ֆինանսավորում (անկախ չափից):

Աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեից, իրականացնում են բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունները: Մրցույթը կազմակերպում է ԿԿՀ-ն:

Նախընտրական հիմնադրամների հայտարարագրերը (Ընտրական օրենսգիրք, հոդված 28)

Կուսակցությունը պարտավոր է ներկայացնել նախընտրական հիմնադրամի մուծումների և օգտագործման մասին հայտարարագիր: Հայտարարագիրը ներկայացվում է՝

- Քարոզչության սկիզբից 10-րդ օրը.
- Ազգային ժողովի և ՏԻՄ ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը.
- Ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Հայտարարագիրը ներկայացվում է ԿԿՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը և հրապարակվում է ԿԿՀ-ի կայքում 3 օրացուցային օրվա ընթացքում: Հայտարարագրում նշվում են բոլոր մուծումները՝ նշելով ամսաթիվը, գումարի չափը, մուծողի անունը, ինչպես նաև յուրաքանչյուր ծախսը՝ նշելով կատարման ժամկետը և հաստատող փաստաթղթերի տվյալները: Կոմունալ ծախսերը, վառելիքի ծախսերը և մինչև 7 նստատեղ մարդատար ավտոմեքենաների վարձակալությունը հայտարարագրման ենթակա չեն:

Աղյուսակ 1. Թեկնածուների և ընտրված պաշտոնյաների հայտարարագրերի տեսակները



Աղյուսակ 2. Կուսակցությունների հայտարարագրերի տեսակները

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՏԵՍԱԿ	Ո՞Վ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ	Ո՞Ր	ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ
Կուսակցության գույքի հայտարարագիր	Կուսակցությունը (ընտրությունների շրջանում)	ԿԸՀ-ին	Ընտր. օր. հոդված 8, մաս 5 + «Կուսակցությունների մասին» օր. հոդված 22, մաս 2
Նախընտրական հիմնադրամի հայտարարագիր	Կուսակցությունը (ընտրությունների շրջանում)	ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը	«Կուսակցությունների մասին» օր. հոդված 28
Կուսակցության տարեկան հաշվետվություն	Կուսակցությունը	ԿԿՀ-ին	«Կուսակցությունների մասին» օր. հոդված 22, մաս 1 + հոդված 27



Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) դերը

ԿԿՀ-ն ինքնավար պետական մարմին է, որը գործում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-96-Ն, 09.06.2017, ուժի մեջ՝ 20.11.2019) հիման վրա՝ կոլեգիալության, ֆինանսական ինքնուրույնության, հանրային հաշվետվողականության և քաղաքական չեզոքության սկզբունքներով (հոդված 3):

Հայտարարագրերն ու ԿԿՀ-ի դերը. ԱԺ ընտրությունների թեկնածուների հայտարարագրերն ընդունում, ստուգում և հրապարակում է ԿԸՀ-ն (Ընտրական

օրենսգիրք, հոդված 28): ԿԿՀ-ն թեկնածուների հայտարարագրերի ընդունման կամ ստուգման ուղղակի մասնակից չէ ընտրարշավի փուլում: Այնուամենայնիվ, ԿԿՀ-ն ուղղակի ընդգրկված է երկու հարակից գործընթացում.

(1) կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց հայտարարագրերն ընդունվում և ստուգվում են ԿԿՀ-ի կողմից «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի կարգով (հոդված 24, մաս 1, կետ 3), և

(2) ընտրվելուց ու պաշտոնը ստանձնելուց հետո ԿԿՀ-ն ամբողջությամբ ստանձնում է ընտրված պաշտոնյայի հայտարարագրերի ստուգումը «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգով:

Կուսակցության ղեկավար մարմնի անդամի հայտարարագիրն ԿԿՀ-ի կայքում հրապարակային է, թեկնածուի հայտարարագիրը՝ ԿԸՀ կայքում (թեև պրակտիկայում սա ամբողջովին չի պահպանվում): Եթե նույն անձը և՛ կուսակցության ղեկավար մարմնի անդամ է, և՛ ընտրական ցուցակում թեկնածու, ապա երկու հրապարակային աղբյուրների համատեղ ուսումնասիրությունը ՀԿ-ների ու լրագրողների համար արդյունավետ գործիք է գույքային անհամապատասխանությունների կամ թաքնված ակտիվների բացահայտման համար:

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկումը. ԿԿՀ-ն ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների արժանահավատությունն ու ամբողջականությունը և կազմակերպում է դրանց պարտադիր աուդիտը (ՀՕ-96-Ն, հոդվածներ 40.1, 40.2, «Կուսակցությունների մասին» օրենք, հոդված 22): Սա ընտրություններից անկախ մշտական վերահսկողության մեխանիզմ է՝ կուսակցության ընդհանուր ֆինանսական գործունեության տարեկան կտրվածքով: Եթե ստուգման արդյունքում հայտնաբերվում են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ԿԿՀ-ն նյութերն անհապաղ փոխանցում է գլխավոր դատախազություն (հոդված 40.1, մաս 10): Ընտրությունների շրջանում կուսակցության գույքի հայտարարագիրն իր հերթին ուղղվում է ԿԸՀ-ին (Ընտրական օրենսգիրք, հոդված 8, մաս 5), որը լրացնում է Ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածով նախատեսված վերահսկիչ-վերստուգիչ ծառայության աշխատանքը նախընտրական հիմնադրամների մասով: Քանի որ ԿԿՀ-ի տարեկան հաշվետվության տվյալները (www.cpcarmenia.am) և ԿԸՀ-ի հրապարակած գույքի հայտարարագիրը երկուսն էլ հրապարակային են, դրանց համատեղ ուսումնասիրությունը ՀԿ-ների ու լրագրողների համար կուսակցության ֆինանսական պատկերի ամբողջական գնահատման արդյունավետ գործիք է:

Շահերի բախումն ու անհամատեղելիությունը. ԿԿՀ-ի հոդված 27-ով նախատեսված վարույթի մեխանիզմն ուղղված է «պաշտոն զբաղեցնող անձին»: Ընտրարշավի ընթացքում թեկնածուի հնարավոր շահերի բախումն ու վարչական ռեսուրսի օգտագործումն ընկնում են Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի կարգավորման ներքո, ոչ ԿԿՀ-ի լիազորությունների: Ընտրվելուց և մանդատը ստանձնելուց հետո ԿԿՀ-ի ամբողջ

գործիքակազմը՝ անհամատեղելիության, շահերի բախման, հայտարարագրման ստուգում, ամբողջությամբ տարածվում է ընտրված պատգամավորի կամ ՏԻՄ ղեկավարի վրա: Ցանկացած անձ կարող է ԿԿՀ-ին գրավոր դիմում ներկայացնել պաշտոն զբաղեցնող անձի անհամատեղելիության, վարքագծի կանոնների խախտման կամ շահերի բախման վերաբերյալ՝ խախտման պահից մեկ տարվա ընթացքում (հոդված 28): Ընդունված որոշումներն ու եզրակացությունները հրապարակվում են ԿԿՀ կայքում ընդունման օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում (հոդված 21, մաս 18):


ՄԱՍ Բ. ՄԻՆԶԵՐՏՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՓՈԻԼԸ

2. Նախընտրական քարոզչության կանոնակարգումը

2.1. Քարոզչության ժամանակահատվածը (հոդված 19)

Քարոզչության պաշտոնական ժամկետները կարգավորվում են ընտրությունների տեսակից կախված. ԱԺ ընտրությունների ժամանակ քարոզչությունը սկսվում է թեկնածուների գրանցումից հետո և ավարտվում քվեարկության նախորդ օրը՝ ժ. 8:00-ին: Քվեարկության նախորդ և քվեարկության օրը քարոզչության ցանկացած ձև արգելվում է:

2.2. Քարոզչության արգելված ձևերը



Ընտրակաշառքի արգելք (հոդված 19, մաս 6). Քարոզչության ընթացքում, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը, թեկնածուներին և կուսակցություններին արգելվում է ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ կամ խոստանալ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ, մատուցել ծառայություններ:

Բարեգործության դիմակով քարոզչության արգելք. Բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները ասոցացվում են ընտրություններին մասնակցող ուժերի հետ, քարոզչության ժամանակ չեն կարող բարեգործություն իրականացնել ընտրությունների համայնքներում (հոդված 19, մաս 6.1):

Անանուն քարոզչության արգելք (հոդված 21, մաս 11). Արգելվում է անանուն (առանց հեղինակի կամ պատվիրատուի նշման) քարոզչական տպագիր նյութերի, թռուցիկների, պաստառների, ինչպես նաև սոցիալական ցանցերում անանուն աղբյուրներով քարոզչության տարածումը: Քարոզչական նյութի վրա պետք է նշված լինի հեղինակը, պատվիրատուն, տպաքանակը, տպագրման տեղը:

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 218 (Ընտրակաշառք ստանալը)՝ մինչև 3 տարի ազատազրկում, խումբ անձանց դեպքում՝ 3-7 տարի

Հոդված 219 (Ընտրակաշառք տալը)՝ 3-6 տարի, խումբ անձանց դեպքում՝ 4-8 տարի

Հոդված 220 (Ընտրակաշառքի միջնորդություն)՝ մինչև 3 տարի, իշխանական լիազորությունների օգտագործման դեպքում՝ 2-5 տարի

Հոդված 221 (Բարեգործության արգելքի խախտում)՝ 3-6 տարի ազատազրկում

Հոդված 211 (Քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելը)՝ մինչև 3 տարի ազատազրկում, ծանրացուցիչ հանգամանքներով՝ 3-6 տարի

2.3. Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը (հոդված 23)

Հանրային պաշտոնյաները ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսները, որոնցով տիրապետում են իրենց պաշտոնի շնորհիվ, արգելվում է օգտագործել նախընտրական քարոզչության նպատակով: Արգելքը տարածվում է հետևյալ կատեգորիաների վրա.

- ☒ Հանրային ծառայողներ.
- ☒ Դատավորներ, դատախազներ.
- ☒ Ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քրեակատարողական ծառայության աշխատակիցներ.
- ☒ Ընտրական հանձնաժողովների անդամներ.
- ☒ Զինված ուժերի ծառայողներ.
- ☒ Կենտրոնական բանկի, վերահսկիչ պալատի աշխատակիցներ:

Աժ պատգամավորների մասով կիրառվում է հատուկ ռեժիմ. քարոզչություն իրականացնելու իրավունք ունեն, սակայն չեն կարող օգտագործել պետական ռեսուրսներ:

Վարչական ռեսուրսի օգտագործումը հաճախ թաքնված է. ծառայողական մեքենաների օգտագործում քարոզարշավի համար, պետական շենքերում քարոզչական միջոցառումներ, ենթականերին հանդիպումների բերում, պետական աշխատակիցներին քարոզարշավային ակցիաներին մասնակցելու հարկադրում: Փաստագրումը պետք է ներառի ժամանակ, վայր, մասնակիցներ և, ըստ հնարավորության, տեսանյութ կամ լուսանկարներ:

Կուսակցության լիազոր ներկայացուցիչներին վերաբերող դրույթներ («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 6)

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող կուսակցության անդամները իրավունք չունեն օգտագործել իրենց ծառայողական դիրքը, ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տրանսպորտը, ենթակայաններին հոգուտ կուսակցական շահերի: Մա լրացնում է Ընտրական օրենսգրքի հոդված 23-ը (վարչական ռեսուրսի արգելք) և ընդլայնում է կիրառման ոլորտը ընտրությունից դուրս ևս:

2.4. Քվեարկության օրը արգելված գործողություններ (հոդված 22, մաս 3)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ ԵՆ՝

-  Քվեարկության կենտրոնին հարող մինչև 50 մետր շառավղով խմբային հավաքները
-  Մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը
-  Թեկնածուի՝ տեղամասային կենտրոնում կամ նրան հարող 50 մետրի շառավղի սահմաններում գտնվելը, բացառությամբ քվեարկելու դեպքի
-  Մինչև ժամը 20.00-ը՝ սոցիոլոգիական հարցումների հրապարակումը

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ


-  **Հոդված 210**
(Ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելը) — մինչև 2 տարի ազատազրկում, ծանրացուցիչ հանգամանքներով՝ 3-6 տարի
-  **Հոդված 224**
(Ձենքով տեղամասային կենտրոն մուտք գործելը)՝ 1-3 տարի
-  **Հոդված 224.1**
(Թեկնածուին ինքնաբացարկ ներկայացնելուն հարկադրելը)՝ մինչև 3 տարի, ծանրացուցիչ հանգամանքներով՝ 3-6 տարի



3. Ընտրությունների ֆինանսավորման թափանցիկությունը

3.1. Կուսակցության գույքի և ֆինանսավորման սկզբունքները

Կուսակցությունները կարող են բանկային հաշիվներ ունենալ միայն ՀՀ տարածքում գործող, Կենտրոնական բանկի լիցենզավորած բանկերում («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 23, մաս 6): Բոլոր դրամական վճարումները կատարվում են անկանխիկ հաշվարկներով (հոդված 23, մաս 7): Մեկ ֆիզիկական անձի անդամավճարի առավելագույն չափը տարեկան չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը (հոդված 23, մաս 3):



Այս ցանկը գործում է կուսակցության ողջ գործունեության համար, իսկ քարոզարշավ իրականացնելու նպատակով ստեղծված նախընտրական հիմնադրամի համար գործում են ավելի խիստ կարգավորումներ, որոնք հաջորդ բաժիններում ավելի մանրամասն կներկայացվեն: Ուշադրության է արժանի

- ☑ Կուսակցության ընդհանուր ֆինանսավորման մասով. Իրավաբանական անձինք չեն կարող նվիրատվություն կատարել առհասարակ («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 24, մաս 4, կետ 2):
- ☑ Նախընտրական հիմնադրամի ֆինանսավորման մասով. միայն օտարերկրյա իրավաբանական անձինք, միջազգային, բարեգործական և կրոնական կազմակերպությունները չեն կարող նվիրատվություն կատարել (Ընտրական օրենսգիրք, հոդված 27):

Նվիրատվությունների սահմանաչափերը («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 24, մաս 2).

Մեկ ֆիզիկական անձի կողմից նվիրատվության տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 10,000-ապատիկը: Կուսակցության ընդհանուր նվիրատվությունների գումարը՝ նվազագույն աշխատավարձի մեկ միլիոնապատիկը:

Կուսակցության պետական ֆինանսավորումը («Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 26).

Պետական ֆինանսավորում ստանում են այն կուսակցությունները, որոնց ընտրական ցուցակը վերջին ԱԺ ընտրություններում ստացել է առնվազն 2% կողմ ձայն.

Դաշինքների համար գործում է ընտրական արգելապատնեշը.

Ֆինանսավորման բանաձևը՝ սանդղակային՝ ըստ ստացված ձայների տոկոսի.

20% «նպատակային» ֆինանսավորում կախված է գենդերային հավասարությունից (40%+ պակաս ներկայացված սեռ → ստանում է կեսը) և տարածքային ստորաբաժանումների առկայությունից:

Կուսակցության ակտիվները չեն կարող 5 անգամ գերազանցել տվյալ տարվա բոլոր կուսակցությունների ընդհանուր պետական ֆինանսավորման գումարը, հակառակ դեպքում ֆինանսավորում չի ստանում:

3.2. Ընտրական գրավը

Մինչ նախընտրական հիմնադրամի ձևավորումը, կուսակցությունները և թեկնածուները գրանցվելիս ԿԸՀ-ի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ (Ընտրական օրենսգիրք, հոդված 25): Սա բարեփոխության առաջին ֆինանսական ֆիլտրն է՝ կանխելու ոչ լուրջ կամ ապատեղեկատվական նպատակներով մասնակցությունը:



Գրավը վերադարձվում է, եթե.


- Կուսակցությունը մասնակցել է մանդատների բաշխմանը.
- Կուսակցությունը ստացել է բոլոր կուսակցությունների կողմ ձայների 2%+ (դաշինքի դեպքում՝ 4%+).
- Թեկնածուն ստացել է 5%+ կողմ ձայն.
- Ինքնաբացարկ է ներկայացրել մինչև գրանցումը
- Ընտրություններն անվավեր են ճանաչվել.
- Թեկնածուն մահացել է.

Մյուս բոլոր դեպքերում գրավը չի վերադարձվում:

3.3. Նախընտրական հիմնադրամները (հոդվածներ 26-28)

Աժ ընտրությունների մասնակից յուրաքանչյուր կուսակցություն պարտավոր է բացել նախընտրական հիմնադրամ՝ առանձին հաշիվ, որը կօգտագործվի բացառապես քարոզարշավի ծախսերի համար: Հիմնադրամի միջոցները ձևավորվում են.

- ❖ Կուսակցության սեփական միջոցներից.
- ❖ Կուսակցության անդամների մուծումներից.
- ❖ Քաղաքացիների կամավոր նվիրատվություններից (օրենքով սահմանված սահմանաչափով).
- ❖ Իրավաբանական անձանց նվիրատվություններից (օրենքով սահմանված սահմանաչափով):



ԱՐԳԵԼՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (ՀՈԴՎԱԾ 27).

- Օտարերկրյա պետություններից, օտարերկրյա իրավաբանական անձանցից, օտարերկրացիներից.
- Միջազգային կազմակերպություններից.
- Բարեգործական կազմակերպություններից.
- Կրոնական կազմակերպություններից.
- Անանուն աղբյուրներից:

3.4. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (Ընտրական օրենսգիրք, հոդված 29)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը վերահսկողություն է իրականացնում նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի նկատմամբ: Նշված գործառույթներն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 17.06.16թ. N 39-Ն որոշմամբ սահմանվել է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը: Ծառայության ղեկավարը նշանակվում է ԿԸՀ որոշմամբ՝ 7 տարի ժամկետով: Ղեկավարը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն՝ ընտրությունների նշանակումից 10 օրվա ընթացքում, կարող է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կազմում նշանակել մեկ աուդիտոր (ՀՀ-ում աուդիտորի որակավորում ստացած, ընտրական իրավունք ունեցող անձ)։ Աուդիտորների գործունեությունն ավարտվում է ընտրությունների արդյունքների հրապարակումից 5-րդ օրը։

Ծառայությունը ստանալուց 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփման ժամկետից 1 օր առաջ, ստուգում է հայտարարագրերը և ներկայացնում եզրակացությունը ԿԸՀ-ին, որն այն հրապարակում է իր կայքում։ Խախտումներ արձանագրվելու դեպքում ԿԸՀ-ն պարտավոր է քննարկել եզրակացությունը։

Ծառայությունն իրավունք ունի բանկերից, կուսակցություններից, ծառայություններ մատակարարող կազմակերպություններից ստանալ **ցանկացած** տեղեկություն, տեղեկանք կամ փաստաթղթի պատճեն՝ նախընտրական ծախսերի վերաբերյալ։

Ծառայության հիմնական գործառույթներն են.

- ☒ Նախընտրական հիմնադրամների կողմից ներկայացված հայտարարագրերի ստուգում.
- ☒ Ֆինանսական տեղեկատվության հանրային հասանելիության ապահովում.
- ☒ Արգելված ֆինանսավորման աղբյուրների բացահայտում.
- ☒ Հաշվետվությունների ներկայացում ԿԸՀ-ին:

Քրեական պատասխանատվությունը. Քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից խոշոր չափով (10 մլն ՀՀ դրամից ավելի) չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը պատժվում է մինչև 1 տարի ազատազրկմամբ։ Հայտարարագիրը ժամկետում չներկայացնելը՝ 1-3 տարի ազատազրկում (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 221.1)։

4. Լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները


Ընտրական գործընթացի լուսաբանումը լրատվամիջոցների սահմանադրական իրավունքն է, որն իր մեջ ներառում է ոչ միայն տեղեկատվության հավաքման, այլև տեղեկատվության հանրությանը հաղորդելու պարտականությունը։

4.1. Հավատարմագրումը

Լրատվամիջոցի ներկայացուցիչը հավատարմագրվում է ԿԸՀ-ի կողմից։ Հավատարմագրումից հետո ստանում է իրավունք.

- Ներկա գտնվել ընտրական հանձնաժողովների նիստերին.

- Ներկա գտնվել քվեարկության սենյակում քվեարկության օրը.
- Իրականացնել տեսանկարահանում քվեարկության սենյակում, հանձնաժողովների նիստերին.
- Ստանալ արձանագրությունների պատճեններ.
- Ներկայացնել բողոքներ ընտրական խախտումների վերաբերյալ:



4.2. Քվեարկության սենյակում ներկայության կանոնները (հոդված 65, մաս 6)

Քվեարկության սենյակում միաժամանակ չեն կարող ներկա գտնվել մեկ լրատվամիջոցից մեկից ավելի ներկայացուցիչ: Տեսանկարահանումը չպետք է խախտի քվեարկության գաղտնիությունը՝ քվեարկության խցիկի կամ քվեաթերթիկի բովանդակության կադրավորումն արգելվում է:

4.3. Քարոզչության եթերաժամի հավասարություն (հոդված 20)

Հանրային հեռարձակողը (Հանրային հեռուստառնկերություն, Հանրային ռադիո) պարտավոր է ընտրությունների շրջանում տրամադրել անվճար եթերաժամ ընտրությունների մասնակից բոլոր ուժերին՝ հավասար պայմաններով: Մասնավոր լրատվամիջոցները կարող են առաջարկել եթերաժամ վճարովի հիմունքներով, բայց պարտավոր են պահպանել հավասարության սկզբունքը՝ նույն գնագոյացմամբ բոլոր մասնակից ուժերին:

4.4. Քաղաքական գովազդը (հոդված 19, մաս 1.3)

Քաղաքական գովազդը պետք է հստակ պիտակավորված լինի որպես «քաղաքական գովազդ»՝ նշելով պատվիրատու քաղաքական ուժը: Քողարկված քաղաքական գովազդը

(օրինակ՝ խմբագրական նյութի ձևով ներկայացված կուսակցության պաշտպանական բովանդակություն) արգելվում է: Սոցիալական ցանցերում քաղաքական գովազդն ևս ենթակա է նույն կանոնակարգի:

4.5. Սոցիոլոգիական հարցումները (հոդված 22, մաս 2)

Սոցիոլոգիական հարցումների արդյունքների հրապարակումը կանոնակարգված է հետևյալ կերպ.


- ☑ Քվեարկության նախորդ և քվեարկության օրը մինչև ժամը 20:00 (քվեարկության ավարտը) արգելվում է հրապարակել սոցիոլոգիական հարցումների արդյունքները.
- ☑ Հարցումները հրապարակելու դեպքում պարտադիր է նշել՝ պատվիրատուին, կատարող կազմակերպությանը, նմուշի չափը, հարցման մեթոդաբանությունը, անցկացման ժամկետները, մարժան.
- ☑ Սոցիոլոգիական հարցումները չեն կարող պատվիրվել կուսակցության նախընտրական հիմնադրամի միջոցներից (հոդված 28):

Արգելվում է. Քվեարկության նախորդ և քվեարկության օրը (մինչև ժ. 20:00) արգելվում են քարոզչության ցանկացած ձև, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումների արդյունքների հրապարակումը: Այս կանոնի խախտումը կարող է հիմք լինել լրատվամիջոցի վարչական պատասխանատվության ենթարկման համար:

ՄԱՍ Գ. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

5. Դիտորդական առաքելությունը

Դիտորդական առաքելությունը ընտրական բարելավության կարևոր երաշխիք է. անկախ դիտորդների ներկայությունը հանձնաժողովների աշխատանքի ընթացքում մեծացնում է թափանցիկությունը և նվազեցնում խախտումների ռիսկերը:



5.1. Դիտորդություն իրականացնելու իրավունքը (հոդված 30)

Դիտորդական առաքելությունը կարող են իրականացնել տեղական և միջազգային կազմակերպությունները՝ ԿԸՀ-ի կողմից հավատարմագրման միջոցով:

Տեղական դիտորդական կազմակերպությունների համար պահանջները

Հայաստանում գործող դիտորդական առաքելությունները կարող են իրականացնել միայն այն հասարակական կազմակերպությունները, որոնք.

- ☑ Կանոնադրությամբ ունեն ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության նպատակներ առնվազն ընտրությունների նշանակումից մեկ տարի առաջ.
- ☑ Հավատարմագրվել են ԿԸՀ-ի կողմից սահմանված կարգով.
- ☑ Չեն կրում քաղաքական կուսակցության ֆինանսավորում կամ քաղաքական ուժի հետ ուղղակի կապ:

Միջազգային դիտորդական առաքելությունները հավատարմագրվում են ԿԸՀ-ի կողմից՝ համապատասխան միջազգային կազմակերպության հրավերի առկայության դեպքում:

5.2. Դիտորդների հավատարմագրումը (հոդված 31)

Հավատարմագրման համար դիտորդական կազմակերպությունները ներկայացնում են.

- ☒ Դիմում.
- ☒ Կազմակերպության կանոնադրությունը.
- ☒ Դիտորդների ցուցակը՝ նրանց անձնական տվյալներով.
- Ֆինանսավորման աղբյուրների մասին տեղեկատվությունը:

ԿԸՀ-ն հավատարմագրումը մերժել կարող է միայն օրենքով սահմանված հիմքերով:

5.3. Դիտորդի վարքագծի կանոնները

Դիտորդը պարտավոր է լինել չեզոք, անկողմնակալ, խուսափել ընտրության գործընթացին միջամտելուց և ընտրողների վրա ազդեցություն գործելուց:

